APAGA
Quarterly

آپاگا
فصلنامه

فصلنامه فرهنگی – اجتماعی مطالعات شرق شناسی ، ایرانشناسی و ارمنی شناسی
An International Journal of Oriental Studies

سال	صنعت٪	کشاورزی٪	شهرنشین	روستایی	شهری٪	روستایی٪
۱۹۱۳	۲۳/۹	۷۶/۱	۱۰۴۰۰۰	۸۹۶۱۰۰	۱۰	۹۰
۱۹۱۹	۱۳/۱	۸۶/۹	–	–	–	–
۱۹۲۶	–	–	۱۶۷۰۹۸	۷۱۴۱۹۲	۱۹	۸۱
۱۹۳۹	۷۷/۹	۲۲/۱/	۳۶۶۴۴۷	۹۱۵۸۹۱	۷۱	۲۹
۱۹۵۸	۷۸/۱	۲۷/۹	۸۸۱۸۴۴	۸۸۱۲۰۴	۵۰	۵۰
۱۹۶۰	۷۹/۰	۲۱/۰	۹۱۵۶۰۰	۹۰۷۷۰۰	۵۰/۲	۴۹/۸
۱۹۶۵	۸۰/۰	۲۰/۰	۱۱۷۴۰۰	۹۵۹۲۰۰	۵۵/۱	۴۴/۹
۱۹۷۰	۸۹/۰	۱۱/۰	۱۴۸۱۵۳۲	۱۰۱۰۳۴۱	۵۹	۴۱

ISSN 1682-5438

شماره ۹۱ پاییز(آذر) ۱۴۰۱

No. 91, Դեկտեմբեր, 2022

ԱՊԱԳԱ
Հանդես

APAGA
Quarterly

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական եռամսյա հանդես
An International Journal of Oriental Studies

Սադոկ Բարոնչ

ISSN 1682-5438

Համար 91 Դեկտեմբեր, 2022 թ.

No. 91 December 2022

ԱՊԱԳԱ Համար 91 Դեկտեմբեր, 2022 APAGA

No. 91, December, 2022

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական միջազգային եռամսյա հանդես

An international Quarterly Journal of Oriental studies

Արտոնատեր, Հրատարակիչ եւ Գլխավոր խմբագիր

License-holder, Publisher & Editor-in-Chief

էդ. Բաղդասարյան / Ed. Baghdasarian,

Փոստարկղ համար 15875-9488 Թեհրան-Իրան

POBOX No. 15875-9488 Tehran – Iran

WEB: www.ApagaOnline.com and www.apagamonthly.4t.com

E-mail: apaga98@hotmail.com **ISSN 1682-5438**

Բովանդակություն

Հայերեն Սադոկ Բարոնչ

Անգլերեն Քրիստոնեությունը հին Իրանում…

Պարսկերեն Պատմական Հայաստանի բնակչությունը

Contents

Armenian Sanok Baronch

English Early Bible colleges in Persia…

Persian Population in the Ancient Armenia

- Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
- Արտատպության դեպքում հղումը «Ապագա»-ին պարտադիր է:
- Ստացված հոդվածները չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Subscriptions: $ 20 per year Գինը 10000 ռիալ

آپاگا فصلنامه بین المللی ایرانشناسی و ارمنی شناسی

شماره ۹۱ پاییز ۱۴۰۱

صاحب امتیاز و مدیر مسئول

ادیک باغداساریان

صندوق پستی شماره ۹۴۸۸-۱۵۸۷۵

تهران - ایران

نشانی اینترنت www.ApagaOnline.com و www.apagamonthly.4t.com

پست الکترونیکی **apaga98@hotmail.com**

ISSN 1682-5438

فهرست

فارسی جمعیت مردم در ارمنستان باستان

ارمنی سادوک بارونچ تاریخنگار ارمنی در لهستان

انگلیسی درباره مسیحیت در ایران باستان

مقالات و دیدگاه های مندرج در نشریه لزوما" بیانگر موضع "آپاکا" نیست.

نشریه در حک و اصلاح مقاله ها مجاز است.

مقالات و مطالب رسیده باز گردانده نمی شود.

استفاده از مطالب "آپاگا" با ذکر ماخذ آزاد است.

شمارگان ۱۰۰ بها ۱۰۰۰۰ تومان

چاپ احسان-تهران چهارراه ولیعصر پلاک ۱۱۴۸

ՀԱՅԱԶԳԻ ԼԵՀԱԿԱՆ ՊԱՏՄԱԲԱՆ ՍԱԴՈՒԿ ԲԱՐՈՆՉ

Ռ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Պատմագրությունը ուկրաին և լեհ ժողովուրդների հոգևոր մշակույթի, ասևարի և տնտեսության մարզերում ակնառու դեր կատարած բազմաթիվ նշանավոր լեհահայ աղգասեռմերի է հիշատակել, որոնց զավակների անունները մտել են այդ ժողովուրդների պատմության մեջ։ Բարոնչներն այդ գերդաստաններից են։

Լեհական հանրագիտարաններից մեկի տվյալներով դրանց մի շառավիղը ժէ դարից հաստատվել էր Լվով ու ստացել ազնվական տիտղոս[1]։

Պատմարան Բարոնչն իր նախնիներից Գրիգորի մասին գրում է, թե նա 1782 թ. Լվովից հատուկ Ղրիմ է ուղարկվում տեղի հայերին կաթոլիկացնելու, բայց քանի որ 1778 թ. Ղրիմի հայերին գաղթեցրել էին Հարավային Ռուսաստան, Գրիգորը հայերից պատարկված Ղրիմից Նկատերինոսլավի (այժմ՝ Դնեպրոպետրովսկ) վրայով ետ է դառնում Լվով[2]։

Այս տվյալները Բարոնչների մասին եղած ամենահին հիշատակություններն են։

ԺԹ դարում Բարոնչ աղգանունը հանդիպում է նաև ռումինահայոց մեջ։ Գերդաստանը լեհական և ուկրաինական մշակույթներին մի քանի ականավոր գործիչներ է տվել։ Հիշյալ ժողովուրդների արվեստի պատմության մեջ կարևոր վաստակ ունի նշանավոր նկարիչ-քանդակագործ Թադեուշ Բարոնչը (1849—1905). Նա սովորել է Կրակովի Արվեստից դպրոցում, այնուհետև ավարտելով Մյունխենի գեղարվեստից ակադեմիան, 2 տարի արձանագործության մեջ հմտացել է Ֆլորենցիայում։ Թադեուշ Բարոնչը դեռևս ուսանողական շրջանից տաղանդավոր արվեստագետի անուն է հանել՝ արժանանալով մի քանի բարձր պարգևների և մրցանակների, իսկ արդեն 1895 թ. լեհական մեծ հանրագիտարանը նրա մասին գրում է. «Նա բազմաթիվ քանդակների, նկարների, արձանախմբերի, մեդալների, սեմվոլիկ հուշարձանների հեղինակ է, որոնցով դասվում է մեր ամենահռչակավոր արվեստագետների շարքը»[3]։ Կերտել է լեհ և ուկրաին ժողովուրդների մշակութային պետական գործիչներ Յան Սոբեսկու, Կոստյուշկոյի, Միցկևիչի, Շևչենկոյի, Բոլեսլավ Կրիվոուստի ու մյուսների արձանները, կիսանդրիները և հուշարձանները։ Միջազգային մրցույթներում և ցուցահանդեսներում (Ռեպին, Չիկագո, Կրակով, Մյունխեն) բազմաթիվ մրցանակներ է շահել[4]։ Մեծ հռչակ է ունեցել նաև որպես մեդալիոնների ու մահարձանների հեղինակ։

Բարոնչի ստեղծագործություններից կան Պոզնանում, Կրակովի ազգային թանգարանում, Լվովում (41 գործ), Վարշավայում և աշխարհի այլ թանգարաններում։ Լվովի հռչակավոր օպերային թատրոնի քանդակների մի մասը, նույն քաղաքի մի քանի շենքերի հարթաքանդակները, Լվովի քաղաղային մուտքի 2 աոյուծների արձանները, այլև այսօր Գդանսկում գտնվող Յան Գ. Սոբեսկի թագավորի արձանը Թադեուշ Բարոնչի ստեղծագործություններն են[4]։

Թադեուշ Բարոնչի կրտսեր եղբայր Ռոման Բարոնչը (1856—1930) լեհաստանի և, մանավանդ, Արևմտյան Ուկրաինայի նշանավոր գիտնական-վիրաբույժներից էր, տպագրել է բազմաթիվ հոդվածներ և գիտական աշխատություններ։

---

[1] Wielka Encyklopedia historiczna, Warszawa, 1895, т. 1, էջ 126։

[2] Sadok Barqcz „Żywoty slawnych ormian w Polsce", Lwów, 1856, էջ 65—66.

[3] Wielka Encyklopedia hist. 1895, հ. 1, էջ 126։

[4] Նույնը նաև Polski slowniki biograficznv. krakow. 1935, т. 1, էջ 292։

Նույն ընտանիքի մյուս զավակ Երազմ Բարոնյը (1856—1930) լեռնային ինժիներ էր, բայց ատավել հայտնի էր արվեստի բազմազան ստեղծագործությունների արտակարգ հարուստ և արժեքավոր հավաքածոյով (նկարներ, քանդակներ, հայկական և արևելյան գորգեր, ձեռագիր մատյաններ, գրքեր), որը, մոտ 500 միավոր, իր հնատիպ և հազվագյուտ հրատարակություններով հարուստ մեծ գրադարանի հետ միասին նվիրել էր Կրակովի ազգային թանգարանին, ուր իր անունով հիմնված է եղել հատուկ բաժին[4]։

Այս տոհմի շառավիղներից էր Լվովցի բանաստեղծ Ստանիսլավ Բարոնյը (1864—1936)։ Նա ևս նկարների, ձեռագիր մատյանների, քանդակների և հնատիպ գրքերի հավաքածո ուներ, Լվովի իր տանը պարբերաբար հավաքույթներ էր կազմակերպում՝ մասնակցությամբ լվովցի երիտասարդ բանաստեղծների։

Լեհ մանկավարժության մեջ երախտիք ունի երաժիշտ-մանկավարժ Յան[5] Բարոնյը։ Սրբանց տոհմից էր Լվովի քաղաքային լեհական թատրոնի 1892—98 թթ. տնօրեն Ստանիսլավ Բարոնյը[6]։ Ծնթագրում ենք, թե Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ «Հանդես ամաօրյա» ամսագրի 1887—1921 թթ. խմբագիր, հայտնի բանասեր, Սուչավացի Ռափայել Պատրոնյը ևս այդ տոհմից էր։

Ազգատոհմի ամենահայտնի և ակնառու դեմքը՝ Վինցենտ-Ֆերդինուշ-Սադոկ Բարոնյը (1814—1892) ծնվել է Ստանիսլավում (այժմ՝ Իվանո-Ֆրանկովսկ) «ոչ հարուստ հայ ծնողներից», ապրիլի 29-ին, 1821—1830 թվերի մեջ ավարտել է տեղի տարրական դպրոցն ու գիմնազիան։ Լվովի հոգևոր ճեմարան ընդունվելու ապարդյուն փորձից հետո Բարոնյը ստիպված մի տարի ուսուցչություն է անում Ստանիսլավի մոտերքի Օտընյա գյուղում։ 1831 թ. փորձում է մտնել Լվովի Դոմինիկյան ուխտի միաբանություն, բայց դեմ է առնում «հայոց ծիսակարգի կաթոլիկ եկեղեցու» հարուցած բազմաթիվ դժվարություններին[7]։ Դոմինիկյան միաբանություն մտնելու գործը գլուխ կգար լեհահայոց կաթոլիկ եկեղեցու ծիսակարգից լատինական ծիսակարգին անցնելով միայն, այդ պատճառով նա հրաժարվում է հայոց կաթոլիկ եկեղեցու զավանությունից և դիմում է Հռոմ՝ վավերացնելու իր այդ որոշումը, որից հետո միայն նա իրավունք կունենար մտնելու դոմինիկյան միաբանություն[8]։

Այդ գործի կարգավորմանը համառորեն ապասող Բարոնյը «ժամանակ չկորցնելու նպատակով» երկու տարի «գովելի առաջադիմությամբ» էքստերն ուսանում է Լվովի համալսարանի փիլիսոփայության բաժնում, երկու տարի էլ՝ աստվածաբանության բաժնում։

«1835 թվին,— շարունակում է Բարոնյը*,— հայերն ինձ հրավիրեցին ճեմարան (Լվովի հայոց ճեմարանը նկատի ունի—Ռ. Հ.), բայց այդ ժամանակ Հռոմից ստացվեց թուլտասվություն, ես չուզեցի երախտամոռ լինել և, երախտագիտությամբ ընդունելով իմ հանդեպ ցուցաբերած նրանց բարյացակամությունը (Դոմինիկյանների—Ռ. Հ.), մտա Պոդկոմնինայի վանք, ուր և... ընդունեցի Սադոկ անունը»[9]։ Այսհետև գիտական աստիճան ստանալու նպատակով միաբանության հատուկ գործուղմամբ Բարոնյն ուսումը շարունակում է Լվովի համալսարանի աստվածաբանության բաժնի վանականների համար ստեղծված դասընթացներում (այդ ժամանակ հոգևորականները աշխարհականների հետ չէին սովորում, նրանց համար համալսարանում կարդում էին հատուկ դասախոսություններ), սակայն հիվանդության պատճառով կրկին կիսատ է թողնում։

Պոդկոմնինայի վանքի ճեմարանն ավարտելուց և քահանա ձեռնադրվելուց հետո (1838) հաջորդ տարի պաշտոնավարում է Լվովի «Աստծո մարմին» վանքում (գրադարանի վարիչ և առաջնորդական փոխերեցի պաշտոնակատար)։

Նույն տարվա մեջ 24-ամյա Բարոնյը պատնում է վերոհիշյալ ճեմարանի «Աստվածաշնչային գիտությունների պրոֆեսոր»[8]։ 1842—1845 թթ. Դոմինիկյանների ժուկվսկի տարրական դպրոցում կրոն է դասավանդել, իսկ 1845-ին կարգվել է տեղի վանքի վանահայր։ Այդ ժամանակ էլ կորցնում է հորը (մայրը մահացել էր 1836 թ.)։ Մի քանի ամիս անց կարճ միջոցով կրկին կանչվում է Լվով իր երբեմնի պաշտոնին, այնտեղից 1846 թ. սկզբներին ուղարկվում է Բոլկի, իսկ այնուհետև, նույն տարում՝ Տրամենից, որտեղ վանահոր և կառավարչի պաշ-

---

[5] „Tygodniki Powszechny", Krakow, 1976, № 38 *(շաբաթաթերթ)*։

[6] „Poslaniec świetego Grzegorza, Lwow, 1927, № 2, էջ 5—6 *(ամսագիր)*։

[7] Przeglad koscielny, 1893, т. 1, էջ 69—73 „kro'tka autografia"։ *Ակռուհետև՝ ձեռնագրություն*։

* *Ինքնակենսագրության բնագիրը այժմ պահպանվում է Լվովի գիտական գրադարանի ձեռագրատունը (Օսոլինսկիների բաժին, I 3757)*։

[8] Polski slownik Biograficzny, *Կրակով, 1935, հ. 1, էջ 290—291*։

տոններով մնում է մինչև 1851 թ.։ Տրսմննիցի քաղաքացիները 1848 թ. բուրժուական հեղափոխության ժամանակ Բարոնչին «ժողովրդական ժողովի նախագահ և հաշտարար դատավոր են ընտրում»[8]։

1851 թ. նա դարձյալ Լվովի աստվածարանության ճեմարանի դասախոս էր, իսկ 1853—1857 թթ. եպիսկոպոսարանի՝ գավառների գծով պաշտոնյա։ 1855 թ. նշանակվում է Պոդհոմենիայի վանքի վանահայր, բայց շուտով հրաժարվում է այդ պաշտոնից (դրա փոխարեն երկար տարիներ եկեղեցու դատախազ է ընտրվել), մեկուսանում է վանքի խցերից մեկը և «Ընդհանավորի կյանք վարելով»[9] բացառապես զբաղվում է գիտությամբ*։

«Օրինակելի քարոզչության համար» 1854 թ. Դոմինիկյանները նրան շնորհում են գլխավոր քարոզչի (PRAEDICATOR GENERALIS) աստիճան, իսկ 1861-ին Հռոմից ստանում է աստվածաբանության դոկտորի վկայական։ Որպես երախտավոր պատմաբան, 1858 թ. Բարոնչը ընտրվել է Կրակովի գիտական ընկերության անդամ։ Նա նաև «Հնագիտական ընկերության» պատվավոր անդամ էր, փայլուն տրամագիծ, Ս. Օրգելբրանդտի հռչակավոր «Հանրագիտարանի» խմբագրության աշխատակից[10, 11]։

Պատմագիտության, բանասիրության, կրոնի պատմության, դավանաբանական այլևայլ հարցերի, հրապարակախոսական և այլ թեմաներով ավելի քան 70 հոդվածներ է գրել, որոնք տպվել են «Գրական հանդես» (DZIENNIK LITERACKI), Ջանգակ (DZWONEK), «Լվովյան լրագիր» (GAZETA LWOWSKA), «Ազգային լրագիր» (GAZETA NARODOWA), «Հանդես հնախոսության» (PRZEGLAD archeologiczny), «Ընտանիքի բարեկամը» (PRZYJACIELA DOMOWEGO) և այլ պարբերականներում[11]. նամակագրություն է ունեցել իր ժամանակի ամենահայտնի ու ճանաչված գրողների, գիտնականների ու արվեստագետների հետ։

Մենագրությունների մեծ մասը Պոդհոմենիայի վանքում է գրել, որոնցից առաջինը տպվել է 1845 թ.։

Մահացել է 1892 թ. ապրիլի 2-ին։

* * *

Քիչ և միակողմանի ուսումնասիրված հեղինակ լինելով, Բարոնչը սովետական պատմագիտության մեջ գլխավորապես հայտնի է միայն հայերին նվիրած իր երկու աշխատություններով (մեծ մասամբ՝ «Ակնարկներ հայոց պատմության» գրքով), այսինքն՝ որպես հայագետ։ Լեհ և ուկրաինական պատմությանն ու բանասիրությանը վերաբերող նրա շատ հետաքրքրություններ տակավին տակ են մնացել, իսկ դրանց մի մասը սովետական պատմագիտությանը ծանոթ չէ գոնե վերնագրերով։

Սովետական գիտնականներից նրա մասին «Սադոկ Բարոնչը նախկին Գալիցիայի հայոց պատմության աղբյուր» հոդվածով առաջինը ուկրաինացի գիտնական Ի. Կրիպյակևիչն է հանդես եկել[12]։ Ուկրաին գիտնականն այդ հոդվածում Բարոնչի մասին կենսագրական տեղեկություններ տալուց հետո, նրան իբրև Արևմտյան Ուկրաինայի և Լեհաստանի հայ գաղթավայրերի պատմության ականավոր ուսումնասիրող է ներկայացնում՝ նրա դերը թուղթի նշելով նաև ուկրաին պատմագիտության և գավառագիտության մեջ (այս հոդվածում նա միայն «Ակնարկների» մասին է խոսում)։

Բարոնչի գիտական գործունեությանը վերաբերող 2 փոքրիկ հոդված ունի լվովցի պատմաբան Յա. Դաշկևիչը։ Դրանցից մեկը՝ երկու էջանոց մի հաղորդում, շահեկան է նրանով, որ սովետական պատմագիտության մեջ առաջինն է շեշտում Բարոնչի ակնառու դերը ուկրաին պատմագիտության ու բանահյուսության բնագավառներում և բերում է նրա մի քանի ուսումնասիրությունների վերնագիրը[13]։

---

[9] «Ինքնակենսագրություն»։

* Դոմինիկյանները ոչ միշտ են գնահատել իրենց ուխտակից գիտական-հասարակական վաստակը, հաճախ, հրիտասարդ տարիներին մանավանդ, խիստ և անհարկի քննադատություններով հոգեկան ծանր ապրումներ են պատճառել գիտնականին։

[10] Poslaniec sw. Grzegorza, Lwo'w, 1927, № 7, էջ 5—6։

[11] Նույն տեղում, 1928, № 8, էջ 13—16։

[12] Исторические связи и дружба украинского и армянского народов, Երևան, 1961, էջ 38—47, այսուհետև՝ ИСД։

[13] Український історічний журнал, Київ, 1964, № 2 (Հոդվածը մեզ համար բանասի-

Յա. Դաշկևիչի երկրորդ հոդվածը («Հայ պատմաբան Սադոկ Բարոնչը որպես ուկրաինի բանահյուսության ժողովող», ռուսերեն, ՊՀՀ 1965, № 1) Բարոնչի բանահյուսական ժողովածուի մասին է, ուր կենսագրական թոուշիկ տեղեկություններից զատ, կան նաև էլի մի քանի մենագրությունների վերնագրեր։ Հոդվածը բացահայտում է ուկրաին բանասիրության պատմության մեջ Բարոնչ-բանահավաքի ակնառու վաստակը։ Նույն հեղինակը նրա հայագիտական 2 աշխատությունների մասին՝ որպես հայ գաղթավայրերի պատմության աղբյուրների, ընդհանուր գծերով խոսում է 1962 թ. Երևանում լույս տեսած իր „Армянские колонии на Украине в источниках и литературе XV—XIX вв." գրքի 124—128 էջերում։

Յա. Դաշկևիչն այստեղ հիշում է նաև հետազոտողի այն մի քանի աշխատությունները, որոնց մեջ լեհահայերի վերաբերյալ տեղեկություններ կան։

Սադոկ Բարոնչի ուսումնասիրությունները հիմնականում Լեհաստանի և Արևմտյան Ուկրաինային են վերաբերում։ Գալիցիայի քաղաքների մասին նրա մի շարք աշխատություններ, ինչպես «Ծուկիվա քաղաքի հուշարձանները», «Ճաքլովեցի հուշարձանները», «Տեղեկություններ փոքր Պունիկվիցայի մասին», «Ագաթ առևտրական քաղաք Բրոդին», «Սամանխավ քաղաքի տարեգրությունը» և այլ մենագրություններ, անուրանալի արժեքներ են ԺԲ դարի երկրորդ կեսի լեհ և ուկրաին պատմագիտության աստպարեզում։

Լեհ երաժշտագետ և բանասեր Բրոնիսլավա Վույչիկ-Քեոփրուլյանը իր «Լեհահայերը» աշխատության մեջ բարձր գնահատելով Բարոնչի պատմագիտական ուսումնասիրությունները, գրում է. «Նա եղել է նաև լեհական մի քանի քաղաքների մասին պատմական ակնարկների հեղինակ, որոնցով մեր գիտության մեջ սկզբնավորվում է առանձին քաղաքների պատմության ուսումնասիրությունը»[14]։

Ակադ. Ի. Կրիպյակևիչը Բարոնչին մեծ տեղ է հատկացնում Գալիցիայի ու Պոդոլիայի գավառագիտության մեջ։ «Իր 60-ի չափ աշխատություններով Բարոնչը Արևմտյան Ուկրաինայի պատմության մշակմանը նպաստել է նաև նրանով,— նշում է Կրիպյակևիչը,— որ Գալիցիայի առանձին վայրերին նվիրված մի շարք հոդվածներ ու մենագրություններ է գրել ...Գոլոտորյի, Ժուլկվայի, Զոլոգիցիի, Օլեսկի, Պիդգիցայի, Պոդկոմենիայի, Փոքր Պունկվիցի, Տարտակովի մասին գրած նրա գործերը բավական մեծ նշանակություն ունեն Արևմտյան Ուկրաինայի գավառագիտության համար»[15]։

Բարոնչի կենսագիրները նրա լավագույն աշխատությունների մեջ են մտցրել «Պամիենտնի չեյուսվ Պոլսկիխ» փաստաթղթերի ժողովածուն (ամբողջական վերնագիրը՝ «Հիշատակարան Լեհաստանի պատմության՝ ըստ Լվովի պաշտոնական վավերագրերի ու ձեռագրերի», Լվով, 1855), որը լեհ պատմագիտության կարևոր աղբյուրներից լինելով, նպաստել է Լեհաստանի պատմության որոշ հարցերի մշակմանը։ Գրքում հավաքված փաստաթղթերի մեծ մասը վերաբերում է ԺԷ և ԺԸ դարերին։ Ամենահին փաստաթղթերը 1383—1387 թվերից են, ամենանորը՝ ԺԸ դարավերջին։

Աստվածաբանության, ուկրաին և լեհ եկեղեցու պատմության, դավանաբանության, լեհական թագավորության սահմաններում կաթոլիկ այլազան միաբանությունների (Դոմինիկյաններ, Բերնարդիններ, Վասիլյաններ), Դոմինիկյան առանձին վանքերի ու եկեղեցիների պատմությանը նվիրված նրա փաստաթղթերով հարուստ մի տասնյակի հասնող տպագիր հետազոտությունները (օր.՝ «Ակնարկներ Լեհաստանի քարոզչական ուխտի պատմության», «Կաթոլիկական հոգևորականության եղբայրը», «Բեռնարդինների օսխտի հիշատակարանը», «Կրակովի Դոմինիկյան վանքն ու եկեղեցին», «Պոզկոմենիայի Դոմինիկյան վանքի պատմությունը» և այլն) շոշափելի ավանդ են ԺԲ դարավերջի լեհ և ուկրաինական պատմագիտության այդ բաժինների ուսումնասիրության մեջ, իսկ որպես սկզբնաղբյուրներ՝ գիտական հետաքրքրություն են ներկայացնում նաև այսօր։

Լեհ և ուկրաին ժողովուրդների արվեստի պատմության և արվեստագիտության էջերից է նրա մի ուրիշ՝ «Սրբագույն Մարիամի հրաշագործ պատկերները Լեհաստանում» աշխատությունը։ Լեհ մտավորականները ժամանակին ըստ արժանվույն են գնահատել գիտնականի այս գիրքը։ «Բարոնչի... կարևորագույն աշխատություններից «Սրբագույն Մարիամի հրաշագործ պատկերները Լեհաստանում» գիրքը,—կարդում ենք «Ինքնակենսագրության» մեջ,—այդ հարցի (Մարիամի

բական գիտ. թեկնածու Մ. Պետրոսյանն է թարգմանել, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը)։

[14] Wojcik-Keoprulian Bronislawa, „Ormianie Polscy", Lwo'w, 1923, էջ 24։

[15] ИСД—1961, էջ 38—47.

սրբապատկերների պատմության հարցի—Ռ. Հ.) առաջին լայնածավալ ու լիակատար պատմությունն է Լեհաստանում՝ սկսած XVIII դարից մինչև մեր օրերը»[16]։

Մոտավորապես ԺԹ դարի 40-ական թվականներից, պատմագիտական աշխատությունների համար նյութեր հավաքելուն զուգընթաց, Բարոնչը ժողովում էր նաև բանահյուսական նյութեր, որոնց մասին տպագրում էր հաղորդումներ և հոդվածներ։ Իր տպագիր առաջին բանահյուսական նյութի («Հեղհ Յաա») առնչությամբ Բարոնչն այն ուշագրավ միտքն էր հայտնել, թե լեհ-ուկրաինական ավանդություններում և հեքիաթներում այստեղ գաղթած արևելյան ժողովուրդների բանահյուսության տարրեր կան[17]։ *Բարոնչի խոսքերը, անտարակույս, կարելի է տարածել նաև ժԱ դարից Կիևյան Ռուսիա գաղթած հայերի բանահյուսության վրա։*

Պոդկոմնինայի վանք մտնելուց հետո, 1866 թ., սեփական ծախսերով (ինչպես և իր մըևնացած աշխատությունների մեծ մասը) լույս է ընծայում բանահյուսական մի ժողովածու՝ «Հեքիաթներ, ծիծաղականներ, ավանդություններ և առակներ ի Ռուսիա» վերնագրով, որը ուկրաին բանահյուսության պատմության արժեքներից է։

Թեև Բարոնչի ժողովածուն լույս տեսնելուց առաջ լեհ բանասեր-պատմարաններ Խոդկևսկին, Պաուլը, Վույցիցկին, Պետրուշևիչը և այլք արդեն տարբեր ժամանակներում (1833—1856) լեհերենով հրատարակել էին ուկրաինական բանահյուսության ժողովածուներ, այսուամենայնիվ դա ԺԹ դարակեսի ուկրաինացի մտավորականներին ու հասարակական գործիչներին չի խանգարել շատ բարձր գնահատելու նրա գիրքը։ Ծնվում բնակվելիս ուկրաինացի ականավոր պատմաբան, հասարակական գործիչ և հրապարակախոս Մ. Դրագոմանովը Իվան Ֆրանկոյից փոստով ստանում է հիշյալ ժողովածուի առաջին հրատարակությունը և «իր ուսումնասիրությունների համար անգնահատելի արժեք» համարելով, Ֆրանկոյին հղած նամակում նրան խորհուրդ է տալիս «բովանդակությամբ բացառիկ հետաքրքիր այդ ժողովածուն ամբողջովին արտագրել»[18]։

Կրիպյակևիչը նշում է, որ ժողովածուի նյութերը իրենց գրական գործերում «օգտագործել են Իվան Ֆրանկոն և ուրիշներ»[19]։

Գրքի հավելվածում զետեղված լեհերեն և ուկրաիներեն երգերն ու կենցաղային նկարագրություններ այս աշխատությանը նաև ազգագրական արժեք են հաղորդում։

Նա, ինչպես վերը նշեցինք, ի սկզբանե բանահյուսության հավաքելու ընդգծված հակում է ունեցել և երբեմն, այս կամ այն քննվող հարցի առնչությամբ, այդ նյութերը մեջբերել է իր գրքերում։ «Ակնարկների» մեջ, օրինակ, Յազլովեցի հայերի այստեղ առաջին անդամ երևալու վիճելի հարցը քննելիս, պատմաբանը բերում է լեհհայոց մի գեղեցիկ ավանդություն, ուր պատմվում է հայերին նեղող Յազլովեցի թաթար իշխանի վայրագությունների ու սրան նկովթով պատժած հայ եպիսկոպոսի մասին[20]։ *Ազգագրական նյութեր կան նաև «Սրբագույն Մարիամի հրաշագործ սրբապատկերները» աշխատության մեջ, ուր բավականին շատ ուկրաինական սովորություններ նկարագրելուց բացի մեջբերում է ուկրաինական միջնադարյան հոգևոր երգերի նմուշներ։*

Բարոնչը մի քանի բանասիրական աշխատություններ ունի գրած ԺԶ—ԺՀ դդ. լեհ և ուկրաին մշակույթի ականավոր գործիչներ Սմոտրիցկու, Հայտնի աստվածաբան-փիլիսոփա Կասիան Սակովիչի, ուկրաին թատերագրության հիմնադիրներից Յակոբ Գալատովիչի և այլոց մասին (օր.՝ «Մխիթեր Սմոտրիցկի ի Գոլոգորը», «Կասիան Սակովիչ», «Զալոժցե ի Գալատ Յակոբ» և այլք)։ Իր ուսումնասիրություններից շատերի մեջ Բարոնչը օգտագործել է նաև լեհհայ համայնքների ու եկեղեցիների դիվանների զանազան վավերագրերը, որոնք լույս են սփռել դիտարկվող այլևայլ հարցերի վրա։ Այդ պատճառով հիշյալ աշխատություններում բազմաթիվ տեղեկություններ կան նաև լեհհայերի մասին։ Օրինակ՝ «Հիշատակարան Լեհաստանի պատմության...» գրքում Բարոնչը «Լեհհայ դատաստանագրքից» մի քանի հատվածներ է բերում. սա հայ իրավունքի պատմության մեջ ուշադրության արժանի ավանդ է այն առումով, որ Ֆ. Բիշոֆից ու Կ. Վույցիցկուց հետո լեհհայ դատաստանագիրքը դիտական շրջանառության մեջ մտցնելու փորձերից է։ Նույն գրքի Տրամենից քաղաքին վերաբերող բաժնում տեղեկություններ է տալիս քաղաքի հայ գաղութի պատմությունից։

---

16 *Ինքնակենսագրություն, էջ 72։*

17 *ՊԲՀ, 1965, № 1, էջ 297։*

18 *Նույն տեղում, էջ 300։*

19 ИСD—1961, *էջ 43։*

20 Rys dzlejo'w Ormianskich... *էջ 88—89։*

Լեհահայոց մասին բազմաթիվ հիշատակություններ կան նաև «Ստանիսլավի հուշարձաններ», «Ցաղլովիցի հուշարձանները» և «Ազատության ազատ քաղաք Բրոդին» մենագրություններում, որոնց մեջ նաև փաստերը բացահայտում են հայ վաճառականների, մշակութային-քաղաքային գործիչների և արհեստավորների դերը այդ քաղաքների բարգավաճմանը նպաստելու գործում[21]։

«Սրբագույն Մարիամի հրաշագործ պատկերները Լեհաստանում» աշխատության 160—161 էջերում Բարոնչը նկարագրում է 1748 թ. լվովյ թերած մի հայկական սրբապատկեր, որը հայազգի Մելքոնովիչը հրդեհից փրկելով հանձնում է լվովի հայոց դատարանների տնօրեն Դոմինիկ Յաշկևիչին ի պահ։

«Հնքիաքներ, ծիծաղականներ, ավանդություններ... ի Ռուսիա» ժողովածուի մեջ կա լեհահայերի մասին մի երկու առակ, որոնք կարելի է համարել լեհահայոց բանահյուսության նմուշներ։ «Ութս չեհյուլ զահոնու կազնոչհեյսկիեգո վ Պոլսցհ», «Տոլմաձը կատոլիցկիեգո», «Կազանիա դոմինիկհանինա պլեհբանկիեվիչա», ինչպես նաև դոմինիկյաններին նվիրված աշխատություններում տեղեկություններ է բերում կաթոլիկ զանազան միաբանությունների հայազգի հոգևորականների մասին, որոնցից շատերը հասել էին բարձր ատիճանների։

Իր 70-ից ավելի բազմարնույթ հոդվածներից մի քանիսն էլ Բարոնչը նվիրել է լեհահայերին։

Լվովում հրատարակվող «Չհեննիկ լիտերացկին» 1853 թ. 34, 37, 38, 40-րդ համարներում տպագրած «Լվովի հայոց առաջնորդարանի ձեռագրերի մասին» ընդարձակ հոդվածը, ցա. Դաշկևիչի կարծիքով, Բարոնչի առաջին լուրջ հայագիտական նյութն էր, ուր հետազոտողը բերում էր 74 հայերեն ձեռագրերի մանրամասն նկարագրությունը։ Նույն տարվա մեջ (զարձյալ «Չհեննիկ լիտերացկի» հանդեսում) տպագրում է «Լվովի հայոց եկեղեցու առաջնորդարանի մատենադարանի մասին» հաղորդումը։

Բարոնչի հայագիտական մյուս նյութը կոչվում է «Սոքհսկին և հայերը»[23], [24]։ Մինչև գարյան Հայաստանի, պարսիկների ու արաբների դեմ հայերի ապստամբությունների, հայ-բյուզանդական հարաբերությունների մասին (այս առնչությամբ, հիմք ընդունելով համապատասխան աղբյուրը, տողատակում բերում է Բյուզանդիայի 14 հայազգի կայսրերի անուններն ու նրանց իշխանության սկիզբը նշող տարեթվերը) համառոտակի խոսելուց հետո անցնում է Անիի թագավորության կործանմանը նախորդող ու հաջորդող դեպքերին, խոսում է Անիի անկումից հետո «20 հազար հայերի» Կիևյան Ռուսիա գաղթելու և ռուսներին նիզակակից՝ պոլովցիների դեմ կռվելու մասին՝ տողատակում բերելով կիևի իշխանի հայերին հղած 1062 թ. հայտնի հրովարտակը։ Հետագա համառոտ շարադրանքում հայտնում է այն միտքը, թե հայերը պարտքի տակ չմնացին ասպնջական Ռուսիային և, լեհ-լիտվական թագավորության մեջ ապրելով 800 տարի, իրենց մտավոր ու հասարակական ունակություններով նպաստեցին այդ երկրի մշակույթի, տնտեսության ու առևտրի զարգացմանը։*

Հոդվածում հայագիտության համար առանձնապես արժեքավոր են Սոքհսկու շրջանի հայ-լեհական կապերն արտացոլող կարևոր փաստերն ու նամանավանդ Սոքհսկու (1629—1696—

---

[21] Chowaniec Czeslaw, „Ormianie w Stanisławowie, 1927 թ., Stanisławowa.

[22] „Dziennik literacki" Lwow. 1854, № 21, էջ 161—162։

[23] Նույն տեղում, 1854, № 22, էջ 169—172։

* Նշում է լեհաստանի քաղաքականության և տնտեսության մեջ մեծ դեր կատարած մի քանի նշանավոր վաճառականներին ու արքունական դեսպաններին (Հակոբ Հայ, Սեֆար Մուրատովիչ, կոմս Կոստանդին Սուլեյման, Քրիստաֆոր Սերբկովիչ) ինչպես նաև Դրյունվալդի (1410), Թաննեբերգի (1410), Վառնայի (1444), Խոտինի (1621, 1673) և Վիեննայի (1683) ճակատամարտերին լեհ զորքերի շարքում հայ զինվորների գործած սխրանքների ու հերոսության մասին։ Ի դեպ, Թուրքական կայսրության մայրամուտը սկզբնավորող Վիեննայի հուշակավոր ճակատամարտին Յան Գ. Սոբյեսկու 30 հազար լեհական զորքերին նիզակակից կռվում էին հինգ հազար հայեր՝ «սեփական համազգեստներով, դրոշակներով և մուղհաններով» (Բարոնչ, «Ակնարկներ»)։ Այս ճակատամարտում չսխալվելուց հետո Թուրքիան 1699 թ. հունվարի 26-ին Կարլովիցի զինադադարին ստորագրեց իր պարտությունը դաշնակիցներից և, հետզհետե կորցնելով վաղեմի հզորությունն ու եվրոպական չամաքամասից զրկված հողերի նշանակալի մասը, արդեն մեկ ու կես դար հետո դուրս մղվեց համաշխարհային քաղաքականության մեջ էղանակ ստեղծելու իր երբեմնի կարողությունից և դարձավ Ռուսաստանի ու Եվրոպայի կովախնձորը։

թագավորել է 1674-ից) հայոց նահապետ Եղեսացի կաթողիկոսին (1691—1705) հղած լատիներեն նամակը, որը մինչև վերջերս անծանոթ էր հայ պատմագիտությանը*։

Այս նամակն ու Բարոնչի՝ հայերին նվիրված դույզ աշխատություններում եղած բազմաթիվ տեղեկություններն ու վավերագրերը մեզ համար բացում են հայ ազգային-ազատագրական շարժումների պատմության մեջ գրեթե չուսումնասիրված և ուսական դիրքորոշմանը նախորդած մի կարևոր փուլի մանրամասնությունները՝ շահեկան աղբյուրներ դառնալով այդ հարցի ուսումնասիրության համար։ 1859 թ. «Չեննիկ լիտերացկի» հանդեսի տարեկան հավելվածում տպած «Լվովի հայ արքեպիսկոպոս Ստեֆանովիչի վարքը» հոդվածի մեջ կարևոր տեղեկություններ է հաղորդում Շնիատինի, Կուտիի, Հորոդենկայի և Բժեժանայի հայ գաղթօջախների մասին։

Լեհահայերին նվիրած գիտական ուսումնասիրությունների հանրագումարը երկու աշխատություններն են՝ «Վարքագրություն Լեհաստանի հռչակավոր հայերի» և «Դրվագներ հայոց պատմության»**, որից հետո նա այլևս հատուկ չի զբաղվել լեհահայերով (նրա ձեռագրերում նույնպես բացի երևույթին հայագիտությանը վերաբերող աշխատություն չի եղել)։

«Վարքագրություն» գրքում տրված են մոտ 350 լեհահայերի (120 տոհմ) կենսագրությունները, որոնցից շատերը ծանրակշիռ դեր են ունեցել թե՛ լեհահայ գաղութի ներսում և թե՛ լեհական թագավորության առևտրատնտեսական ասպարեզներում։ Բարոնչն, իհարկե, իր աշխատության վերնագրի հարցում պիտի շատ զուսպ լիներ, որովհետև, ինչպես նշել են նրա քննադատները և մասնավորաբար հայազգի Լևոն Թհեոդորովիչը լեհահայ ազնվական տոհմերի մասին իր գրքույկում, այդ վերնագիրը պարզապես պիտի հնչեր «Վաստակավոր հայերի վարքը», որովհետև լեհական թագավորներին պարտքով փող տված բանկիրներն ու վաճառականները, հմուտ ոսկերիչները կամ եկեղեցու հիմնադիրները դեռևս բոլորը հռչակավոր չեն[24], լեհահայերի մասին այդպիսի ընդարձակ կենսագրական բառարան Բարոնչից առաջ չի տպագրվել***։

Պատմագիտությանը առավել հայտնի է հայերի մասին Բարոնչի երկրորդ աշխատությունը («Ակնարկներ...»), որը շարադրելիս հետազոտողը ժամանակի լրագրերից, ամսագրերից ու հանդեսներից զատ, օգտագործել է 50-ի չափ տպագիր ու անտիպ աշխատություններ ու աղբյուրներ՝ լեհերեն, հունարեն, անգլերեն, լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, երբեմն նաև հայերեն լեզուներով։ 10 գլուխներից բաղկացած այդ աշխատությունը 5 հատվածի կարելի է բաժանել՝ ա) ակնարկ հայ ժողովրդի համառոտ պատմության, բ) հայերը լեհաստանում, գ) կարճառոտ ակնարկ հայոց գրականության և դպրության, դ) լեհահայոց դատաստանագիրքը և ե) լեհահայոց սովորությունները։

Առաջին չորս գլուխներում («Հայ իշխաններ», «Հայոց թագավորներ», «Արշակունյաց գահատոմ» և «Բարձումն հայոց թագավորության») գլխավոր աղբյուր ունենալով հիմնականում Քանենուիցը, Խորենացին****, Պրոկոպիոսը, Ալոիսիոս-Պիդուն, Կղեմենս Գալանոսը, մեզամոտ ժամանակների պատմությունը շարադրելիս՝ ԺԲ դարի ֆրանսիացի պատմաբան Էժեն Բորի «Հայոց պատմություն» գիրքը, մասնելի ու սեղմ տալիս է հայ ժողովրդի պատմությունը ընդհուպ մինչև ԺԲ դարակես։

Գրքի ամենաընդարձակ՝ «Հայերը Լեհաստանում» հատվածը (էջ 60—180), նվիրված է Լեհաստանի 36 հայաշատ գաղթօջախների պատմությանը՝ այդ վայրերում հայերի առաջին անգամ երևալու պահից մինչև իր ժամանակները։ Ուշադրության արժանի փաստեր ու անուններ կան «Հայոց գրականության» 25 էջանոց գլխում։

Պատմական ծուցիկ ակնարկից հետո «Լեհահայոց դատաստանագիրքը» բաժնում դետե-

---

* Հայ ազատագրական շարժման գործիչների և Սոբեսկու միջև եղած բանավարությունները փաստող այս արժեքավոր վավերագիրը առաջին անգամ հայերեն հրատարակեց պատմաբան Մ. Հովհաննիսյանը «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի 1978 թ. № 1-ում։

** Գրքի ընծայականում գրված է «Մուշ գրքի վաճառքից գոյացած եկամուտը տրամադրվում է Չիրնովիցի հայոց եկեղեցու նորոգմանը։ Մ. Բարոնչ»։

[24] Leon Theodorowicz „Nieco o heraldyce i rodach ormian Polskich" Lwow, 1925, էջ 6,

** Հովսեփ Մինասովիչը ունեցել է այժմ կորած Viri illustres inclytae, nationis Armenae in Polonia («Լեհաստանի նշանավոր հայազգի մարդիկ») ձեռագիր աշխատությունը։ (Տե՛ս՝ Żywoty sł. orm, էջ 210)։

**** Օգտվել է 1736 թ. Վիսթոն եղբայրների լոնդոնյան գրաբար-լատիներեն զուգագիր հրատարակությունից։

դում է 125 հոդվածանի լեհահայ օրենքների ժողովածուն։ Դրքի վերջին հատվածը նվիրված է լեհահայոց սովորութիւններին։ Լեհահայերի սովորութիւնների ու կենցաղի իրեն միայն հատուկ ծայրահեղ մանրակրկիտ ու բծախնդիր նկարագրելու պարագան (չի մոռանում խոհանոցը, հաշատնտակները, կենցաղային ղվարճութիւնները, խաղերը, հուղարկավորութիւնն ու հարսանիքը) այս աշխատութիւնը դարձնում է լեհահայերի աղգագրութիւնն ուսումնասիրելու առումով արժեքավոր աղբյուր*։

* * *

Սադոկ Բարոնչն իր 45-ի չափ տպագիր ու անտիպ աշխատութիւնները գրելիս մեծապես օգտագործել է Լվովի, Ժուլկվայի, Ստանիսլավի, Կամենից Պոդոլսկի, Յարոսլավի, Կրակովի և այլ վայրերի քաղաքային վարչութիւնների, եկեղեցիների ու վանքերի դիվաններում պահպանվող ձեռագիր աշխատութիւններ, արքունական ու պետական հրովարտակներ, վավերագրեր և այլ փաստաթղթեր, որոնցից շատերը (Ա. Կ. Կրիպյակևիչի տվյալներով՝ 100) առաջինն է շրջանառութեան մեջ դրել՝ փրկելով վերահաս ոչնչացումից։ Նրա գործերը շարադրված են միջնադարեան պատմագրութեան ոգով, հետու են գարաշրջանի գիտութեան մեջ հաստատված նորագույն սկզբունքներից, ըմբռնումներից ու հղանակներից։ Այս պատճառով նրա գործերի անժխտելի արժանիքները նշելով հանդերձ, Բարոնչի մասին գրողները նրան ժամանակի հետ չքայլող հնդնակ են համարել։ «Նա սոսկ պատմաբան չէր, այլ նաև տքնաջան ու մանրակրկիտ հետազոտող, որի հաղորդած նյութերից ուրիշները կարող են օգտվել միայն,— գրում է «Ինքնակենսագրութեան» հրատարակիչը,— ...Նրբանունից ավելի տարիներ մեկուսացած ապրելով Պոդոլսկի վանքի իր մենախցում, ծանոթ չէր նորագույն հրատարակութիւններին, որի պատճառով նրա գրվածքներում հնչտ է զանազան թերութիւններ հայտնաբերելը, այսուհանդերձ նրա վաստակը շատ մեծ է, իսկ գործը՝ մի մարդու համար չլսված բան»[25]։

Բարոնչը հայազգի լեհական այն պատմիչներից էր (Յուզեֆովիչ, Զախարիասևիչ, Մինասեվիչ, Անտոնովիչ), որոնք Լվովի առաջին պատմիչ Զիմորովիչից[26] (1597—1677) սկսած անընդհատելի երախտիք ունեն լեհ ու ուկրաին մշակույթի այս կարևոր մարզում։ Մեծ մասամբ սեփական ծախսերով տպագրել է 29 աշխատութիւն, մոտ 18—20 աշխատութիւններ էլ անտիպ են մնացել։ Ունեցել է նաև գրական ստեղծագործութիւններ (օր.՝ «Բաղաշ Ստուդիում օբրշյույվե» գիրքը կամ «Հոզմահատոչ նաոուկովիե» ձեռագիր աշխատութեան մեջ եղած գերմաներեն և լեհերեն ոտանավորները)։

Բարոնչի անտիպ գործերի քանակը ճշտված չէ։ Դրանք ամփոփող ցուցակներից մի քանիսի մեջ նշված են 15 աշխատութիւններ։

Նրեք ուրիշ ցուցակներ (երկուսը՝ լատիներեն, մեկը՝ լեհերեն) հիշյալ 15 աշխատութիւններից բացի պարունակել են էլի մի քանիսը[27]։ Այդ ցուցակներում նշված են եղել նաև բազմաթիվ մատավորականներին հղած Բարոնչի 800-ի չափ նամակները, որոնք պատճենելու սովորութիւն է ունեցել**։

---

* Լեհահայոց սովորութիւնների, ծեսերի և տոների մասին հետաքրքիր տեղեկութիւններ է տալիս նաև Օսկար Կոլբերգը իր „Pokucie. obraz etnograficzny“, գրքում, հատ. I, էջ 353—356։

[25] «Ինքնակենսագրութիւն», էջ 72։

[26] S. Barqcz, Żywoty sławnych ormian.

[27] Polsk. sł. Biograficzny. Krako'w, 1935.

** Այս նամակների մեջ, ըստ երևույթին, եղած պիտի լինեին նաև հայ մտավորականներին հղածներ։ Մենք սա ենթադրում ենք՝ ի նկատի ունենալով հետևյալ հանգամանքը։ Սուլն հոդվածը գրելու առիթով Վրոցլավի Օսոլինսկիների գրադարանի ձեռագրատանը նյութեր փնտրելիս մեր ձեռքն ընկան Գ. արքեպիսկոպոս Այվազովսկու և Միքայել Միհանսարովի մի-մի նամակները Սադոկ Բարոնչին, որոնց լուսապատճենները այժմ գտնվում են Մատենադարանում և որոնք արժեքավոր աղբյուրներ են ԺԸ դարակեսի հայ մտավորականներից այդ երկուսի կենսագրական որոշ փաստերը ճշտելու առումով։

Առանձնապես մեզ համար արժեքավոր է Գ. Այվազովսկու՝ 1875 թ. հունվարի 25-ի (նոր տոմարով՝ փետրվարի 6-ի) նամակը, ուրկից հաստատվում է, որ Այվազովսկիների նախնիները բնակվելիս են եղել Լեհաստանի Բուկովինա և Գալիցիա գավառներում, իսկ նրա հայրը, ծնված լինելով Բուկովինայում, ԺԸ դարասկզբին եկել է Մուղովիա, այստեղից էլ 1820 թվին՝ Ղրիմ (Ս. Բարոնչը հայերին նվիրած աշխատութիւններում տալիս է Այվազ տոհմի համառոտ պատմութիւնը։ Գ. Այվազովսկին, Բարոնչի գրքերում կարդալով իր նախնիների մասին, այս

Բարոնչի դիվանը գտնվելիս է եղել Պոդկոմենիայի վանքի գրադարանում, սակայն 1915 թ. սեպտեմբերին այստեղ ծագած հրդեհից ամբողջովին ոչնչացել էր. Ընկերացած ու կորած ձեռագրերի մեջ, այլ արժեքավոր աշխատություններից զատ, եղել են՝

ա) Katalog dychowienstwa Świeckiego archid. Lwowskie[28]. *(«Լվովի թեմի աշխարհական վանականների ցուցակը 1400—1890 թթ.»)*

բ) Kronika klasztorna, *(վանական ժամանակագրություն) 218 էջ*

գ) Դաշկևիչը, առանց աղբյուրը նշելու, գրում է, թե պատմաբանի անտիպ երկերի մեջ եղել են նաև «Արևմտյան Ուկրաինայի քաղաքներին ու գյուղերին վերաբերող աշխատություններ, որոնք կորել են 1916 թ.»[29];

Բարոնչի դիվանից փրկվել են հետևյալ ձեռագիր աշխատությունները.

ա) Katalog Slinnych nayka i cnota Bazyliańo'w *(«Գիտությամբ և առաքինությամբ նշանավոր Բազիլյանների ցուցակը»). Ձեռագիր պատճենն այժմ գտնվում է Լվովի գիտական գրադարանի ձեռագրատան «Բազիլյանների վանքեր» բաժնում;*

բ) „Materialy do napisanie monografii Krajowych" Zebrał ksiadz Sadok Baracz *(«Գավառագիտական մենագրությունների համար նոթեր». քաղեց հայր Սադոկ Բարոնչը») 462 էջ, 1884 թ.։ Գտնվում է Կրակովի Դոմինիկյան վանքում;*

գ) Zbior roznych wiadomosci" napisał ks Sadok Baracz *(«Զանազան տեղեկությունների ժողովածու» գրեց Սադոկ Բարոնչը) 379 էջ. նույն վանքի գրադարանում է;*

դ) Kronika Klasztoru dominikanow w Podkameniu 1800—1891.*(«Պոդկամենիայի դոմինիկյան վանքի 1800—1891 թթ. ժամանակագրությունը») Կրակովի դոմինիկյան վանքի գրադարանում է;*

ե) Catalogus patrium et Sakri ordinis praedicatorum in Polonia, Russia et magno Dukatu Lithuaniae *(Լեհաստանի, Ռուսիայի և Լիտվական մեծ իշխանության քարոզչական ուխտի սուրբ հարց ցուցակը)*

զ) Razmaitosci naukwe *(«Գիտական խճանկար») 310 էջից, նույն վանքի գրադարանում է;*

է) Կրակովի դոմինիկյան վանքում է գտնվում նաև Բարոնչի կազմած մի փոքրիկ օրացույց՝ Kalendarz dominikanskie w Polsce *(«Լեհական դոմինիկյանների օրացույցը»)*;*

Լվովի գիտական գրադարանի ձեռագրատան Ա. Պետրուշևիչի, Վ. Պլոշչանսկու, Մ. Կոսակի, Մ. Գնատևիչի և այլոց ձեռագրերի մեջ կան նրանց ուղղված Բարոնչի նամակները[30];

Վրոցլավի Օսոլինսկիների գրադարանի ձեռագրատունը գտնվում են բազմաթիվ մտավորականների՝ Բարոնչին հղած նամակները, որոնց մեջ նաև, ինչպես նշել ենք, Գ. Ալեքսովիչը և Մ. Միանասրյանները;

Տպագրվել են հետևյալ 29 աշխատությունները.

1. *Կաթոլիկ եկեղեցու միասնության համար նահատակյալ եպիսկոպոս սուրբ Ցիպրիանի՝ Հռոմի կաթոլիկ եկեղեցու դավանության մեկնությունը, 1845, Պոզնան;*
2. *Ժուլկվա քաղաքի տարեգիրքը, 1852, երկրորդ լրացված հրատարակությունը 1877;*

նամակով Բարոնչից խնդրում է հետաքրքրվել ու տեղեկություններ ուղարկել Բուկովինայում և Գալիցիայում ապրող իր ազգականների մասին);

[28] *Նույն տեղում;*

[29] Український історічний журнал, Київ, 1964, № 2.

** Կրակովի դոմինիկյան վանքում Բարոնչից ձեռագրեր լինելու մասին մեր օգտագործած ոչ մի աղբյուրում նշված չէ. այդ ձեռագրերը մենք ենք հայտնաբերել ու անձամբ թերթել։ Ընդ որում, ձեռագրերից երկուսը հանդիսանում են հիշյալ վանքի յոթանասունն անց միաբաններից մեկի սեփականությունը։ Այս ձեռագրերում ևս բազմաթիվ լեհահայ գործիչների անուններ կան։ Հետաքրքիր է «Զանազան տեղեկությունների ժողովածու» ձեռագրում եղած հեղինակի կենսագրության յուրահատուկ տարեգրությունը հանդիսացող օրագիրը, որը սկսվում է 1836 թվից և վերջանում՝ 1865 թվին։ Արժեքավոր է նաև նույն ձեռագրում եղած «Հատվածներ Լվովի դոմինիկյան վանքի (հոգևոր) խորհրդի գրքերից։ 1606-ից 1767 թիվը» բաժինը։*

«Գիտական խճանկար» ձեռագրերում ամփոփված են 300-ի չափ լատիներեն դարձվածքներ ու քնավոր խոսքեր, հեղինակի լեհերեն ու գերմաներեն ոտանավորները, «Դոմինիկյան հայրերի գրացուցակները» և վերջում՝ իր մարգարեությունը։

[30] *Նույն տեղում։*

3. Հիշատակարան Լեհաստանի պատմության... Լվով, 1855, (310 էջ)։
4. «Լեհաստանի հռչակավոր հայոց վարքը» Լվով, 1856։
   կամ «Վարքագրություն Լեհաստանի գերահռչակ հայերիս»։
5. Պոդկոմենիայի դոմինիկյան վանքի մասին տեղեկություններ, Լվով, 1858, II հր. 1887։
6. Ստանիսլավ քաղաքի հուշարձանները, Լվով, 1858։
7. Ակնարկներ Լեհաստանի քարոզչական ուխտի պատմության, երկու հատորով, Լվով, 1860—1861։
8. Յազլովեցի հուշարձանները, Լվով, 1862։
9. Կաթոլիկական հոգևորականության եղբայրը, Տարնոպոլ, 1864 (504 էջ)։
   (այս գրքում ամփոփված է նաև Օլեսկ քաղաքի մասին մենագրությունը)։
10. Առևտրական աղատ քաղաք Բրոդին, Լվով, 1865։
11. Հեքիաթներ, ծիծաղականներ, ավանդություններ և առակներ ի Ռուսիա, Տարնոպոլ, 1866, II հր.՝ 1886, Լվով։
12. Ակնարկներ հայոց պատմության, Տարնոպոլ, 1869։
13. Պոդկոմենիայի դոմինիկյան վանքի պատմությունը, Տարնոպոլ, 1870 (348 էջ)։
14. Բեռնարդինների ուխտի հիշատակարանը Լեհաստանում, Լվով, 1874։
15. Հետազոտող-ավանդություններ վարդապետարան, Բրոդի, 1875 (232 էջ)։
16. Դոմինիկյան վանքը հին Բորկիի մեջ, Լվով, 1878։
17. Լեռնախովսկիների ազնվական տոհմի հիշատակարանը, Լվով, 1879 (220 էջ)։
18. Դոմինիկյան հայր Պլեբանկևիչի քարոզները, երկու հատորով, 1881։
19. Բուչաչի հիշատակարանը, Լվով, 1882։
20. Վինցենտ Պլեբանկևիչ դոմինիկյանի կրոնական վարդապետությունը, հատ. Ա, Լվով, 1881, հատ. Բ, Լվով, 1884։
21. Յարոսլավի դոմինիկյան հայրերի դիվանը, Լվով, 1884։
22. Տեղեկություններ փոքր Պունիկվիցի մասին (34 էջ), թվին անհայտ է։
23. Կրակովի դոմինիկյան վանքն ու եկեղեցին, Պոզնան, 1886։
24. Մելիչ Սմոտրիցկին և Դոլոգորը, Պոզնան, 1889։
25. Ջալոժցի և Յակուբ Գավատ, Պոզնան, 1889։
26. Տարտակով, 1890։
27. Ամենասրբագույն Մարիամի հրաշագործ պատկերները Լեհաստանում, Լվով, 1891, (307 էջ)։
28. Կասիան Սակովիչ, Պոզնան, 1887։
29. Տարնովսկի, կենսագրական ակնարկ, 20 էջ թիվը անհայտ։

1. Obiasnienie wyznania Wiary RZ—Kat. rzecz sw Cypriana biskupa i mecz. o jednosci kosciola Katolikiego" Poznan 1844.
2. Pamietnik miasta Zolkwi, 1852, *երկրորդ հրատարակ. 1877 թ.*
3. Pamietnik dziejow Polskich, Lwow, 1855.
4. Zywoty slawnych ormian w Polsce, Lwow 1856 *թ.*
5. Wiadomości o Klasztorze o. o; Dominikianow w, Podkameniu" Lwow, 1858, *երկրորդ հրատ. 1877 թ.*
6. Pamiętki, miasta Stanislawowa, Lwow 1858.
7. Rys dziejo'w zakonu kaznodziejskiego w Polsce, *երկու հատորով 1860—1861 թ.*
8. Pamiętki, Iazlowieckie, Lwow 1862.
9. Towarzysz duchowienstwa Katolickiego, Ternopol, 1864.
10. Wolne miasto handlowy BRODY, Lwow 1865.
11. Bajki, Frazki, podanie i pyzslowie na Rusi, 1866 Tarnopol II *հրատ.* Lwow 1836.
12. Rys dziero'w Ormianskich, Tarnopol, 1869.
13. Dzieje Klasztoru W. W. O. O. Dominikianow w Podkameniu, Tarnopol 1870.
14. Pamietnik Zakonu O. O. Bernavdynon w Polsce, Lwow, 1874.
15. Badacz—Studium obyczajowe, Brody, 1875.
16. Klasztor O. O. Dominikanow w starym Borku, Lwow, 1878.
17. Pamietnix szlachtnego Ledóchowskich domu, Lwow, 1879.
18. Kazania dominikana Ks. Plebankiewicza 2 *հատորով* 1881.
19. Pamietnik Buczackie, Lwow, 1882.
20. Nauki veligijne Wincentego Plebankiewicza Dominikanina *երկու հատորով*, Lwow, 1881, 1884.

21. Archiwium O. O. Dominikanow w Jarosławiu, Lwo'w, 1884.
22. Wiadomosc o Punikwicy malej, Poznan, 1886.
23. Klasstor i Kosciol O. O. Dominikanow w Krakowie, Poznan, 188.
24. Melecz Smotrycki, Gologory, Poznan. 1889.
25. Załozce i Gawat jakob, Poznan, 1889.
26. Tartakow—1890.
27. Cudowne obrazy matki majswietszej w Polsce, 1891 Lwow.
28. Kasian Sakowicz, Poznan, 1887.
29. Jan Tarnowski, szkic biograficzny.

The early Bible colleges of Persia and the first Christian missionaries in south-east Asia

By: Brian E. Colless

I. The Early Christian Churches of Asia.

The beginning of the Gospel in Asia goes right back to the first Christian Pentecost, as recorded in the second chapter of Luke's *Acts of the Apostles*. Those whose ears and hearts were touched by the preaching of the disciples of Jesus on that occasion were not all from the countries around the Mediterranean; first in the list of nationalities were the peoples from the lands of the Tigris, the Euphrates, and the Persian Gulf, namely "Parthians, Medes, Elamites, and residents of Mesopotamia". Did all of these go away from Jerusalem and immediately forget what manner of men they were? Or did they carry the message of hope eastwards, travelling the same roads as the magi who had followed the star to Bethlehem years before? Luke does not tell us, since his account is centred on the figure of the Apostle Paul and the expansion of Christianity towards Rome.

